# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

N 396 – Ա 23 սեպտեմբերի 2020 թ.

### ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 164-րդ հոդվածներ, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Անդրանիկ Հարությունյանի անձնական դիմումն

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անդրանիկ Հարությունյանին տրամադրել 2020 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 28-ը ներառյալ (20 աշխատանքային օր):

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անդրանիկ Հարությունյանի պարտականությունները 2020 թվականի հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 28-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Աշոտ Քիշմիրյանի վրա:

3. Անդրանիկ Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի հոկտեմբերի 29-ից:

23.09.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ